ՀՐԱՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

Ն 18 - Ն «10» հոկտեմբեր 2012թ.

ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐԻՆ ՏՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ, ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել
   1) արյան դոնորին տրվող տեղեկատվական թերթիկի ձևը՝ համաձայն հավելված 1-ի,
   2) դոնորի համաձայնության և դոնորի առողջության վերաբերյալ հայտարարագրի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ի.Աբգարյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

ԴԵՐԵՆԻԿ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի
Հոկտեմբեր 10 _ի N 18-Ն հրամանի

ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐԻՆ ՏՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

1. Արյունը մարդկային կյանքեր է փրկում:
2. Արյան դոնորությունը մարդասիրական կամավոր ակտ է:
3. Արյանը փոխարինող որևէ միջոց չկա, այդ իսկ պատճառով Ձեր հանձնած արյունը անգին է:
4. Ձեր և Ձեր արյունը ստացող հիվանդի առողջությանը վնաս չպատճառելու նպատակով Դուք անվճար ենթարկվում եք բժշկական զննման և հակացուցումների բացակայության դեպքում Ձեզ ուղեգրում են արյունատվության:
5. Արյունատվության ընթացքում մանրէազերծ (ստերիլ) պարագաներով հավաքվում է արյուն կամ արյան բաղադրամաս, ինչը օրգանիզմում որևէ բացասական կենսաբանական փոփոխություններ չի առաջացնում:
6. Ձեր արյունը հետազոտվում է արյան միջոցով փոխանցվող մի շարք վարակների հարուցիչների նկատմամբ՝ վիրուսային հեպատիտներ Բ–ի և Ց-ի, մարդու իմունային անբավարարության վարակի, սիֆիլիսի, բրուցելոզի, ինչպես նաև որոշվում է Ձեր արյան խմբային և ռեզուս պատկանելիությունը:
7. Հետազոտման արդյունքների գաղտնիությունը երաշխավորվում է, բացառության Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերից:
8. Դուք իրավունք ունեք արյունատվությունից հրաժարվելու, ինչպես նաև արյունատվությունից հետո արյան կամ արյան բաղադրամասերի օգտագործումը ոչ պիտանի հայտարարելու՝ առանց պատճառների պարզաբանման:

Հավելված 2
ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի
Հոկտեմբեր 10_ի N 18-Ն հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԴՈՆՈՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ _____ տալիս եմ իմ
անունը, ազգանունը, հայրանունը

գրավոր համաձայնությունը արյուն կամ արյան բաղադրամաս հանձնելու վերաբերյալ և լրացնում իմ առողջական վիճակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 24-ի թիվ 02-Ն հրամանի Հավելված 1-ով հաստատված «Դոնորի հարցաթերթիկ»-ը:

Դոնորի ստորագրությունը_____ « »_____20 թ.